ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2025թ. թիվ 279-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ Ա.ԽԼՂԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 18 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ Լ.ԽԼՂԱԹՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի հունիսի 10-ի թիվ 268-Ա որոշումը և հաշվի առնելով Լ.Խլղաթյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Խլղաթյանի անվան թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Խլղաթյանի անվան թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ Լուսինե Խլղաթյանի վրա՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը:

2. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Խլղաթյանի անվան թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Խլղաթյանի անվան թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Լուսինե Խլղաթյանին տալ լրավճար «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Խլղաթյանի անվան թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունիսի 19-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

18/06/2025

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2025թ. հունիսի 18
ք.Վանաձոր